


ՊԱՅՄԱՆՔ

Հարկան գին 10 ԲԵՆ.
Փառապան 12 »
Վեցամս. 10 ԲԵՆ.
Փառապան 6 »
Ստար երկիրներու 21/2
Մանուկան տողը մէկ անգամի հա-
մար 3 զուրուշ, երկու անգամի հա-
մար 2 զուր 5: աւելի անգամներու
համար զատ սահարկութիւն կըլ-
այ :
Իւրաքանչիւր թիւ 40 փարա արծ:



ՀԱՅԱՍՏԱՆԻ ԴԱՏԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԳԱԾԱԴԱՐԱՆ

ՀԱՆԱՊԱՏՈՐԵԱՅ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԵՒ ՏՆՏԵՍԱԿԱՆ

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ 29 ՄԱՐՏ

ՔԱՂԱՔԱԿԱՆ

Շատ անգամ առիթ ունեցած եմք
մեր աղբիւն վիճակին կամ գործող վրայ
Եւրոպական լրագրաց մէջ տեսնուած
հրատարակութիւնները տեղեկութեան
համար մեր ընթերցողաց հաղորդել :
Այսպէս, Անգլիական և Գաղղիական
լրագրերէ բաղուած յօդուածներ կամ
հատուածներ հրատարակուած են մեր
թերթին մէջ : Փախաբերով այս մա-
սին Ամերիկեան մամուլէն ալ ճաշակ
մը տալ մեր յարգող ընթերցողաց, ա-
նոցուտ չեմք համարել Բրիտանիան
երն անուամբ Նիւ-Եորքի մէջ հրատա-
րակեալ քաղաքական կրօնական և
գրագիտական կարեւոր շաբաթաթեր-
թի մը հետեւեալ յօդուածը թարգ-
մանէն, զոր յիշեալ հանդիսին Կ. Պո-
լիս նստող Կոստանդնուպոլիսի զը-
րած է «Հայկական խնդիր» վերնա-
գրով :

Թէ և, մանաւանդ ներկայ պա-
րագրաց մէջ, անհրաժեշտ համա-
րեցանք Հայաստանի թղթակցին ինչ
խօսքերը բարեփոխել կամ բոլորովին
չնշելով կէտադրել այսու ամենայնիւ
օգտակար կը համարուի այժմէն ծա-
նուցանել թէ այս թղթակցութեան
մէջ բացատրուած սխալ կամ անաւ-
ղի գաղափարաց համար որ և է պա-
տասխանատուութիւն չեմք ընդու-
նել, և թէ զանոնք պարզ հետաքրք-
րութեան համար միայն կը ներկա-
յեմք ընթերցողաց :

«Յունական և Պոլսեական մէկ
մէկ խնդիրներ ունեցած էինք, կը-
սէ Ամերիկեան հանդիսին թղթակի-
ցին : և տակաւին ատենց ոչ մին վեր-
ջացաւ : Այժմ Հայկական խնդիր մ'ու-
նիմք, որ միւս երկուքէն աւելի դժ-
ւար և խառնաշփոթ է, բայց արդէն
ստիպողական պէտք կը յուսնէ կար-
գադրութեան, և հաւանականաբար
մեծ տեղ մը պիտի բռնէ ներկայ դա-
րու մէջ : Եւրոպա Արեւելից Բրիտան-
եայ ազգերուն համար հոգ չընեն քա-
նի որ նոքա լուս կենան, բայց երբ օգ-
նութեան համար ազադակներ հանել
սկսին, տարակոյտ չկայ որ վաղ կամ ա-
նագան՝ Եւրոպա ունին կը դնէ անոնց
(սին կամ մանաւանդ անմիտ յայտ) : Եւ-
րեթ թէ Հայը վերջապէս ըմբռնած են
այս գաղափարը, և երկու տարին 'ի վեր-
ջին գաղափարը իրենց գաղափարներն աչ-
խարհի առջև դնել (Եւրոպայի բռնած
կողմնակալ դրեց պատճառաւ), և
իրենք ու իրենց Պատրիարքը բաւա-
կան քաջութեամբ իրենց իրաւունք-
ները կը պաշտպանեն . . . :

«Այժմ բազում նշաններ կան թէ
Անգլիկա յօժարամիտ է Հայոց աղա-
ղակներուն ունին դնել և 'ի նպատ-
անոնց բան մ'ընել, բայց դժուար է

գտնել թէ ինչ ընելու է : Հայք բո-
վանդակ փոքր-Ասիոյ մէջ յրուեալ են,
և իրենց կաթողիկոսը կամ հոգեւոր
գլուխը Ռուսիա կընտրի, ուր նոյնպէս
Հայկական բաղնիքի ժողովուրդ մը
կայ : Թուրքիոյ մէջ միայն փոքր դա-
ւառ մը կայ, այն է վանայ գաւառն,
ուր Հայք մեծամասնութիւն ունին :
Կ. Պոլսոյ մէջ ալ 130,000 հոգի են :
Դիւրին էր Յունաստանի կամ Պոլսոյ
ընդ թաղաւորութիւն մը հաստատել
բայց Եւրոպա ո'ւր կրնայ Հայաստա-
նի իշխանութիւն մը հաստատելու
յոյս ունենալ : Ռուսիա հաւանակա-
նաբար յանձն չպիտի առնու իւր
Հայկական գաւառները տալ, և եթէ
վանայ, Կարնոյ և Տրապիզոնի վրա
յէթնէն Հայկական իշխանութիւն
մը կազմուի, Հայկական փոքրամաս-
նութիւնն առանց օտար օգնութեան
անկարող կը լինի պաշտպանել ինք-
զինք «Բրդաշ և Թրքաշ դէմ», մին-
չև իսկ եթէ Եւրոպա պաշտպանէ ըզ-
Հայս Թուրքիոյ դէմ : Այդպիսի Հա-
յաստան մը գործնականապէս Ռու-
սական գաւառ մը կը լինի եթէ Անգ-
լիա փոքր-Ասիոյ միւս մասերը չըզը-
րաւէ : Իսկ եթէ դրաւէ՝ այն ժամա-
նակ կրնայ փախաբեր որ Անգլիական
ստացութեանց և Ռուսական սահմանա-
գրութեան միջև Հայկական իշխանութիւն
մը գտնուի : Յայնժամ տարակոյտ չը-
կայ որ Ռուսիայէն և փոքր-Ասիայէն
բազմութիւն Հայք աղբ-նորակաբար Հայ-
կական գաւառը կը դնեն :

«Մակայն աւելի հաւանական է որ
Անգլիկա չփորձէ գրաւել փոքր-Ա-
սիա, այլ Հանայ բարեօք կառավա-
րութիւն մը հաստատել Մուլթանին
իշխանութեան ներքե, կամ . . . :
Այս պարագային մէջ յայժ օգտակար
կը լինի ամբողջ փոքր Ասիոյ վրայ
տարածեալ հայկական ժողովուրդ
մ'ունենալ, որովհետեւ մի միայն Հա-
յոց վրայ կը կոչանայ փոքր Ասիա
վերականգնանայնիւ յայտն : Այսպէս
խնդիրը թերեւ լաւագոյն լուծուած
դատմ կը լինի նոյն ինքն Հայոց հա-
մար ալ, որք կրնան 'ի վերջոյ աի-
րող ցեղը լինել փոքր Ասիոյ մէջ : Ա-
նտառութիւն Թուրքերն, իրենց ամեն բա-
րեմանութեամբ իսկ որոյմէ շատ
ունին, թէ և երկրին տեքն ալ են, յան-
կուժ գիմը ցեղ մը լինել կը թուին,
և հանգամանայ զօրութիւն կամ աղ-
ղուութիւն չտեսնելու անոնց վրայ
նոքա ուշադրութեան արժանի են
զիստաւորապէս այն համարութեամբ
որով կը տանին իրենց վրայ ինկած
չարիքներն : և երբ բարեօք վարու-
թիւն հաստատուի, Հայք այդ Թուրքաց
հետաւելի ներդաշնակութեամբ կ'ապ-
րին քան Յունաց հետ, որք Ասիա-
կան Թուրքիոյ մէջ մէկ միլիոնի չափ
կ'ենեն կըզինեն ալ ի միասին առ-
նըով : Թուրքերն ու Հայերն այժմ
իսկ զիրար աւելի լաւ կը հասկնան

քան ուրիշ երկու Արեւելեան աղբեր-
և իրարու հետ կրնան կատարեալ
համաձայնութեամբ ապրիլ կամ . . .
վեհ. Մուլթանին իշխանութեան ներ-
քե, եթէ արդի վարչութիւնը բար-
ւոքի՝ կրօնական հանգամանքը քա-
ղաքային վտարակերպ և դարուս
ոգւոյն հետ համաձայնելով :

«Այս մեծ խնդիրն ի վերջոյ ինչ-
պէս ալ լուծուի, Հայք Եւրոպայի
համակրութեան ու աջակցութեան
համար նոյնքան արժանի են որքան
որ և է աղբ մը ընդ Սամ կայսրու-
թեամբ : Ասիոյ հողին վրայ Ասիա-
կան աւելի մաքուր ուրիշ ցեղ մը
թերեւ բնաւ չկայ որ Հայոց չափ կա-
րող լինի Եւրոպական քաղաքակը-
թութիւնն հասկնալու և իւրացնելու :
Հայոց քաղաքական պատմութիւնն
աշխարհի մինչև առաջին դարերը
կ'ենէ : և թէպէտ պատերազմիկ և
զօրաւոր աղբերէ յրջապատուելով
նոքա երբեք մեծ զօրութեան մը չը
հասան, այսու ամենայնիւ իրենց
ազգային դոյութիւնը զարմանալի
յամառութեամբ պահեցին ամենէն
աննպատակ տարագրացի մէջ անգամ :
Նոքա Բրիտանիական դարձան
չորրորդ դարուն մէջ Ս. Գրիգոր Լու-
սաւորչի քարոզութեամբ, և մինչև
ցայսօր իրենց հաւատքը պահպա-
նեցին 1300 տարիներու հաւածանայ
ու հարստահարութեանց, ինչպէս
նաև աշխարհակալութեանց և դադ-
թակալութեանց հակառակ : Իրենց
ազգութեան ու կրօնին հետ կապ-
ուած են նոյն իսկ Հրէից չափ յա-
մառութեամբ : Այս աղբին ամենամեծ
մարմինը տակաւին Լուսաւորչական
եկեղեցւոյն կը վերաբերի : Բայց ի-
րենց մէկ փոքր մասն Յունական
կայսրութեան ժամանակ Յունաց հետ
միացած էր, և համեմատաբար խիստ
փոքր մաս մ'ալ Թուրքական աշխար-
հակալութեանն է ի վեր կաթողիկ կամ
Բողոքական եկեղեցւոյն յարեցան :

«Ամերիկեան Պորա ընկերութիւնն
երբեք աւելի իմաստութեամբ չգործեց
քան երբ Հայոց աղբն ընտրեց Ասիա-
կան Թուրքիոյ մէջ իրեն ամենէն աւե-
ր յուսալի գաղա Միսիոնարական աշ-
խատութեանց : Այս ընտրութիւնն
այն պատճառաւ չեղաւ թէ Հայք
Թուրքիոյ մէջ ամենէն ստորին և յե-
տադէմ ցեղն են, այլ որովհետեւ ա-
մենէն աւելի յոյս կար անոնցմէ, և ո-
րովհետեւ անոնց եկեղեցւոյն նապաղ դեղ-
մուժ ունէր : Միսիոնարաց նպատակն
այս Հայկական եկեղեցւոյն ո'չ թէ բա-
ժանել կամ կործանել էր, այլ բարենո-
րոգել և աւելի հոգեւորական ընել :
Թուրքական իշխանութեան ներքե
Հայք մեծ աղքատութեան կամ տը-
գիտութեան ենթարկուած էին, այլ
և այլ վարդապետական սխալները
պըրպած էին իրենց եկեղեցւոյն մէջ,
և Զիլիքական կենաց համար եղած

կուռին ժամանակ, կրօնական արա-
րողութիւնը մեծ մասամբ հողեկան
Բրիտանիական տեղը բռնած է-
ին : Բայց ամեն պատճառ կար խոր-
հելու թէ ուսման վերակենդանու-
թեամբ, Աստուածաշնչոյ շրջաբերու-
թեամբ, և հոգեկան ճշմարտութեան
քարոզութեամբ՝ եկեղեցւոյն կը վե-
րակենդանանայ, և կրօնին հոգեւո-
րական հոգեամանայ զօրացումը
Թուրք ահարկեան իսլամ աղբաց
միջև Բրիտանիական աղբեցութեան
համար նոր և կենդանի կեդրոն մը
կը լինի :

Այս յոյսը բոլորովին 'ի դերեկ չե-
լաւ : Գժեղագրաբար, Կ. Պոլսի նստող
եկեղեցական իշխանութիւնը Միսիո-
նարաց ինչ նպատակաւ Թուրքիա ե-
կած լինիլ լաւ չհասկցան, և սոս-
տիկ հալածմամբ ստիպեցին զանոնք
(զՄիսիոնար) առանձին բողոքական
եկեղեցի մը կազմել : Բայց Հայք այ-
ժմ իրենց սխալը կը տեսնեն, և հե-
ռի չէ այն ժամանակն, յորում իմաս-
տուն տնօրէնութիւն մը պիտի լինի
վերջ տալ այս բաժանման ու առան-
ձին կազմաւորութեան, և առաջին յա-
տակադ լին վերադառնալ, Լուսա-
ւորչեան եկեղեցւոյն արդէն մեծ յա-
ռադիմութիւն ըրած է դէպի հո-
գեկան կենքը : Հալածումը դադրե-
ցաւ, և նոյն ինքն Հայոց Պատրիարքը
Բրիտանիայ մարդ մ'է, որ կը տեսնէ
թէ իւր եկեղեցւոյն համար ամենա-
մեծ վտանգն ո'չ թէ Միսիոնարներն
է, այլ անաստուածութեան արագ-
տարածումն : Միսիոնարաց համար
զիստաւոր ընդգրկմութիւնն այժմ սոյն
անաստուածութեան դատին կուգայ, որք
նոր զիտութիւններէն բաւական բան
ուսած են երեւակայելու համար թէ քը-
րիստոնէութիւնը մերժելը գերագոյն
իմաստութեան նշան է : (Շատ ճիշդ-
խօսք է) : Այս մարդիկն (Հայ երե-
տասարդք) ընդհանրապէս եռանդուն
ու վառվառն հայրենասէրներ են,
և տակաւին պէտք ունին սովորելու թէ
անաստուածութիւնն հրացանի նման
կործանման գործիք մ'է, բայց ա-
րածին տեղ ոչինչ կրնայ չինել տե-
ւական կերպի :

Բնականաբար մերթ ընդ մերթ վի-
ճարանութիւնը կը լինին Միսիոնա-
րաց և Հայոց միջև, թէ՛ Բողոքական
և թէ՛ Լուսաւորչական : Վիճարանու-
թիւնը, որք մէկ կողմէն կամ միւ-
սէն որ և է սխալի կամ թիւրիմացու-
թեան մը պատճառաւ յուսալ կու-
գան : Բայց ընդհանրապէս ճշմարիտ
է թէ Միսիոնարք ամենակեղծ հա-
մակրութիւն կը տածեն Հայ ժողո-
վրդեան վերաբերութիւն ունեցող
ամեն բանի վրայ, և ուրախ կը լինին
երբ անոնց գործակցելու առիթ գըտ-
նեն : Իսկ Հայք անոնց ջանից արմէ-
քը կը ճանչնան և երախտագէտ են
բոլոր այն բաներուն համար՝ զորս Մի-

սիօնարք ըրած են աղգը լուսաւորե-
լու և եկեղեցական հոգեկան կեանս-
քը վերակենդանացնելու գործին
օգնութեան համար:

« Տարակոյս չկայ որ այժմ այս
Հայ աղգին քաղաքական պատմու-
ման թեան մէջ խիստ կարեւոր տաղ-
նապի մը հասած եմք, և այս տաղ-
նապին իրենց համար ամենէն դժ-
ուար հանգամանքը յայտն կը կայա-
նայ որ իրենք իրենք քիչ բան
կրնան ընել իրենց համար: Իրենց
բաղդը պիտի կախուի այնպիսի պա-
րագայներէ, որոց վրայ իշխանութիւն
չունին, բայց որք կապակցութիւն
ունին « Անդղիական շահուց » հետ,
« Ռուսիոյ փառապիրութեան » հետ,
« Պատմութեան հաւասարակշռութեան »
հետ, « Օսմ. տէրութեան ամբողջու-
թեան » հետ, ինչպէս նաև « իսլա-
մական մոլեռանդութեան » հետ:
Երբ այս հակառակ շահերն օգին մէջ
իրարու դէմ կը մրցին, անգին Հայք
իրեն ճարակ թողուած են քրդաց,
Ձերքէսաց և այլոց, և իրենց թոյլ-
տուութիւն չլինելով մինչև իսկ անձ-
նական պաշտպանութեան համար
զինուելու: Այժմ ալ վանայ վերայէ-
թին մէջ անօթութենէ կը մեռնին:
Ամեն ուրեք իրեն նուաճեալ ցեղ մը
կը վարակին իրենց հետ, և իրենց վը-
ճարած ծանր տրոց փոխարէն խիստ
քիչ պաշտպանութիւն կը վայելեն:
Միայն դուրսէն կրնան օգնութիւն
խնդրել: Չունին այն դիրքն, յորում
հնար լինի իրենցմէ շարժում մ'ընել
ազատութեան համար: Հաղարաւոր-
ներ Ռուսիա ապաստանած են, և ե-
թէ իրաց արդի վիճակը շարունակէ,
հաղարաւորներ ոչ անոնց պիտի հե-
տեին: Պատճառն այն չէ թէ Հայք
Ռուսիայէն դուրս են: այլ վասն զի չեն
կրնար թուրքիոյ մէջ հանդիստ ապրել:
Իայց եթէ իրենց համար նպատուար
փոխութիւն մը լինի, նոյնպէս
հաղարաւորներով կը վերադառնան
Ռուսիայէն, և ամբողջ աղգին համա-
խըմբուելով արագաբար կը յառաջ-
դիմեն և աղգեցութիւն կ'ստանայ:

Իբրև աղգ մը, Հայք սովաւա-
պէտ, տոկուն և ճարտարամիտ են:
Կրթութեան արժէքը կը ճանչեն, և
որչափ որ կը ներքէ իմանանական քըն-
նադատութիւնս, Հայք դպրոցներու
մէջ իրենք զիրենք նշանուոր ընելու
այնքան ընդունակութիւն ու կարո-
ղութիւն ունին, որչափ նոյն ինքն Ա-
մերիկայի երկաթաուղքի Պատճառ մը
չկայ թէ ինչո՞ւ համար Հայք ազա-
դային մէջ աւելի բարձր դիրք մը
չունենան քան ինչ որ ունեցան ան-
ցեղայն մէջ, և այս նպատակին հաս-
նելու համար իրենց ըրած ջանից մէջ
Ամերիկեան ազատասէր աղգին կա-
տարեալ համակրութիւնը պիտի վա-
յելեն անտարակոյս:

(Հայաստանի թղթակիցն իւր նամա-
կին մնացած մասին մէջ Բէօլլէր Մի-
սիօնարի գործին վրայ կը խօսի: Կ-
Պօլսէն որովհետեւ այս թղթակցութիւն-
ներ 1880 Յունիսի 30 ի թուականը
կը կրէ և Նիւ Եօքթի հանդիպին
Մարտ 3 թուով հրատարակուած է:)

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԼՈՒՐԵՐ

Լոնտոն 8 ապրիլ.
Արդիւնք ծանուցեալ ընտրութեանց.
305 Ազատականք.
178 Պաշտպանականք.
41 Ինքնավարականք:
Տէյլի Նիւս հետեւեալ հեռագիրը կը
հրատարակէ Վիեննայէն. Կը հաւաստեն
թէ Պիտարը իշխանին հրաժարման գը-
խաւոր պատճառն է՝ արքունական կու-
սակցութեան Ռուսիոյ հետ բարեկամա-
կան յարաբերութիւնները վերանորոգե-
լու համար ըրած ջանքը:

Բեղրադուրի 8 ապրիլ.
Միտերիոյ Ռուսական գործադուրք
դէպի Չինաստանի սահմանադրութիւն
ըստին:

Կալիֆօռնի 8 ապրիլ.
Ձրոյց կը տրուի թէ Պիտարիոյ թա-
ղաւորը մեռեր է:

Ֆրանսիոյ հասարակական
Պարիս 8 ապրիլ

Վիլհելմ կայսրը շնորհակց Պիտարը
իշխանին հրաժարական և հրաժարեց որ
գործադուրք մերժուելուն առթիւ դաշ-
նակցական խորհրդին մէջ ծագածին նը-
ման դժուարութեանց լուծման համար ծը-
րադիր մը ներկայէ:

Պարիս 8 ապրիլ.
Երեսփոխանական ժողովոյ մէջ Պ.
Պօլսէնը նախարարն հարցման մը պա-
տասխանելով ըսաւ. « ամեն տէրութեանց
հետ յարաբերութիւնը լաւ են և թէ կա-
ռավարութիւնն էսպէս Ռուսական աշ-
խարհավարութեան մը կը հետեի, որ է
ամեն տէրութեանց հետ բարեկամական
յարաբերութիւն ունենալ՝ առանց մէկու
մը գործիք լինելու: »

Փարիս 8 ապրիլ.
Բեղրադուրիէն եկած լրոց նայելով,
Օրոֆ իշխանը մօտ ժամանակէն Փարիզ
պիտի վերադառնայ իբրև դեսպան:

Փիլիպպ 9 ապրիլ.
Նախագահական ժողովն իւր երէկուան
նստին մէջ ելոյթաւորեց վրայ վիճարա-
նելու տոթիւ պարտաւանդ ըլլէ տուա-
ւելու մտից տնօրէն Պ. Շմիտի, որ Արեւել-
եան Ռումէլի կաշմական կանոնադրին
205 և 204 յօդուածները չէ գործադրե-
լած:

Պարիս 8 ապրիլ.	
Պար. Բան.	10,67 1/2
Երկրաթուղի	55,50
Գաղ. Ե. 8 0/0	119 22 1/2
Ե. Ե. 5 0/0 Նոր	85,20

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Ինչպէս երէկ ծանուցինք, կառա-
վարութիւնը ներկայ ելմտական տար-
ւոյն ելմտացոյցը հրատարակեց: Տէ-
րութեան ծախքերը լաւ մը հաշիւ
լինելէ յետոյ, 22163,260 Օսմ. ոսկ-
ւոյ կը հասնին, առանց ի նկատ առ-
նելու շարժուն պարտքն, որ 20 մի-
լիոն ոսկւոյ կը հասնի:

Հասոյթը մի միայն 16,180,000 ոս-
կի են, և հետեւեալը 6,123,420 ոսկ-
ւոյ բաց մը կայ:

Ասիկց զատ, փորձառութիւնն
հաստատած է թէ հասութիւն մի-
այն երկու երրորդն ամեն ամիս կըր-
նայ հաւաքուիլ փափաքեալ կանո-
նաւորութեամբ, և հետեւեալը կա-
ռավարութիւնն իւր վճարմանց հա-
շիւ երեք չորրորդը կրնայ կատարել:
Կառավարութիւնը 23 վաշտ զօրք
իրենց տունները զրկած է, բայց Հէլ-
լինական և Կոստինէական խնդիրք
տակաւին 169,131 զօրաց զինուցներ-
քն պահպանութիւնն հարկաւոր կը-
նեն:

Այս զօրաց ապրուստը ներկայ
տարւոյս մէջ արտաքին կարգի բաւա-
կան մեծ ծախք մը կը պատճառէ:
Գաղթականաց օգնելու համար ալ
800,000 ոսկւոյ արտաքին կարգի ծախք
մ'անհրաժեշտ դատուած է: Արտա-
քին կարգի ծախքերն 2,109,512 ոսկ-
ւոյ կը հասնին:

Նախարարաց խորհրդին տեղեկա-
գիրը կրէ որ ելմտացոյցի հաւաստ-
րակշռութիւնն ուրիշ կերպիւ ձեռք
չկրնար բերուիլ՝ բայց եթէ պաշտօ-
նատարաց թոշակները նուազեցնելով
և առ կալիմնացած խնդրոց խաղաղա-
կան լուծում մը տալով:

Առ այժմ սա միջոցները ձեռք
առնուած են. — 1. խառն (մէթա-
լիք) դրամներն իրենց բուն արժէ-
քին վերածեցան — 2. Այլ և այլ ծա-
խուց վրայ համեմատական նուազ-
մունք եղան: — 3. Պաշտօնատարաց
թոշակները չափաւորեցան: — 4. Կա-

նոնաւոր պարտուց տոկոսներուն մէկ
մասը վճարել որոշուեցաւ:

Պաշտօնատարաց ամսականներն
32,000 ոսկւոյ կը հասնին, որոյ 18,000
ոսկին մաքսատուէն պիտի առնուի
և մնացածն ելմտական նախարա-
րութենէն, որ այս մասին ընթացիկ
հաշիւներ պիտի բանայ Օսմ. կայսե-
րական Պանքային և Քրէտի Լէօնէ
Պանքային հետ: Կառավարութիւնը
կը յայտարարէ թէ այսպէս ամսականը
այսուհետեւ փափաքեալ կանոնաւո-
րութեամբ պիտի կրնան վճարուիլ:

Լանարայէն եկած մասնաւոր հեռա-
գիրք կը ծանուցանեն թէ Արկայի
դուքան որ Աֆղանստանայ գործոց և
Փոքր Ասիոյ բարենորոգմանց խնդրոյն
նկատմամբ լրտ Պիքսիֆիլիտի նախա-
րարութեան դէմ ըրած յարձակում
ներովը նշանաւոր է: Կարեւոր պաշտօն
մը պիտի ընդունի նոր նախարարու-
թեան մէջ: Արկայի դուքան Անդղիոյ
թագուհւոյն ինամին է. իւր մեծ որ-
դին Լօրնի մարքիզն, որ այժմ Բա-
նատայի կառավարիչ է, Անդղիոյ
թագուհւոյն դուքաններէն մին Լու-
իլ իշխանուհին կ'ուրթեան առած է:
Արկայի դուքան ազատական վերջին
նախարարութեան մէջ Հնդկաստանի
փոխարքայ էր:

Սուրիոյ կուսակալ Բարձր Միտ-
հաթ փաշան Դամասկոսի մէջ ար-
ուեստական վարժարան մը բանալով,
տարեկան 2000 լիւրա եկամուտ կապեց
անոր:

Կը հաւաստեն թէ յիշեալ վար-
ժոցըն այն աստիճան յառաջդիմու-
թիւն ըրեր է քիչ ժամանակի մէջ,
որ արդէն Սուրիոյ դաւառին ոստի-
կան զինուորաց բոլոր զգեստը մա-
տակարարելու գործն իւր վրայ ա-
ռեր է:

Քուսովայի կուսակալը Կուսիսէի
Ալպանիացւոց դուքաններէն մին բռնել
տալով բանտարկած լինելուն համար,
յիշեալ Ալպանիացիք ծանուցագիր
մը զրկեցին կուսակալին, յայտնելով
որ եթէ իրենց մարդն իրենց չը յանձ-
նուի, իրենք ալ Նիքօս անուն հաշա-
կաւոր հրոսակալներն ընթացից հետե-
ւելով կառավարական պաշտօնատա-
րաց մին լեւալ պիտի տանին մինչև
որ Ալպանիացի դուքան աղաթ թո-
ղուի:

Թայմիլ լրագիրը մարտ 27 թիւ
թերթին մէջ Լոնտոնայի Անդղիական
յանձնախմբին մէկ նոր յայտարարու-
թիւնը կը հրատարակէ, որ նուիրա-
տուաց երկրորդ ցանկը կը պարունա-
կէ, Նօթթմիլլըրնիսի դուքան 400
Անդղ. ոսկի տուեր է, Պ. Տ. Պրիլ
150 ոսկի, Պ. Նաթմանայէ Մօնթիֆ-
եօր 30 ոսկի եւ. ընդ ամենին 2,000
Անդղ. ոսկւոյ չափի մինչև ցարդ հա-
ւաքեալ Պ. Մարտօնայալ կը ծանուցա-
նէ թէ «Մանչիսթըրի մասնախումբն
ալ 1,200 ոսկի զրկած է Հայաստան»:

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ	
Է Ս Չ Ա Մ Ը Ո Ւ Մ Ո Ւ Մ Ի Է	
Երէկ իրիկուն գողութեան	41, 6
Յ.յս առաւօտ բացուեցաւ	41, 12
Կէս օրին	41, 10
Բուսի իրիկուն Երկաթուղի	Քր. 35
Ք.յթ ապրամ	Իր. 930
Գըլլիլից	Պը. 51 20
Մէտիսի խորհրդարան	7
Հիւրնոց	201
Մէթալիք	243
Պրիւն	580
Տ փառանոց	300

Ա. Չ. Ա. Յ. Ի.

Տեղեկութիւն կը տրուի մեզ թէ
ի նպատակ սովորոց Դոքանէն եկած
դուքանն ոչ թէ 1200, այլ 2000 ֆը-
լանք է եղեր:
Կըտուի թէ Մարտիկայէն ալ 9600
ֆրանք եկեր է:

Մէրտինի մէջ ևս սաստիկ սով տի-
րած լինելով, տեղի ոյն կաթոլիկ աղ-
գայինք օգնութեան համար հեռագր-
րաւ Ս. Պատրիարք Հօր գլխութիւնն
ու կարեկցութիւնը խնդրեր են:

Մուսուլի կաթոլիկայ Պատրիար-
քին և Բաղէշի կաթոլիկ վարդապե-
տին կողմէ առ Սմեն. Ս. Պատրիար-
քին եկած հեռագրաց պարունակու-
թիւնը մեր երէկուան թուովը հրա-
տարակեցինք, որովք յայտնի է թէ
գաւառաց մէջ կաթոլիկ աղգայինք
ևս մեր Ս. Պատրիարքին դիմելով
դարման և օգնութիւն կը հայցեն:
Նոյնպէս Գեր. Աշեհան, որ Գեր-
Հասունի գործակառարն է, Մէրտի-
նի կաթոլիկ աղգայինց օգնութիւն
ընձեռեցաւ համար անցեալ օր Ս.
Պատրիարքին դիմելու, և դոհութեամբ
կ'իմանամք թէ Ն. Սրբազնութիւնն
ալ սովորեց Կեդրոնական մասնախմբ-
րին յատուկ գիր գրելու է, որպէս
զի յիշեալ դժբաղդ աղգայինց օգ-
նութիւն զրկուի:

Մեք արդէն դոհութեամբ իմա-
ցած եմք թէ Պօլսոյ և դաւառական
մասնախումբք, առանց կրօնի խրա-
րութեան, դժբաղդ սովորեց առհա-
սարակ օգնութիւն կը նուիրեն:

Բայց ցաւ ի սիրտ կը լսեմք թէ
Հասունեան կաթոլիկ աղգայինց ե-
րեւելիներէն ոմանք կը մերժեն եղեր
հանդանակութեան մասնակցել, ա-
ռարկելով թէ իրենք միայն իրենց
աղգին կրնան օգնել:

Նոյնպէս մերժեր են Աղգանուէր
Հայուհեաց ընկերութեան պարա-
հանգիսի տոմսակներն ալ:

Մեք կը իրենք յուսալ թէ
Գեր. Հասունի և մեր Աղգ. Պատրի-
արքարանի միջև վերջերս տեղի ու-
նեցած բարեկամական յարաբերու-
թիւնք կարելի եղածին չափ աղգա-
յին միութեան խնդրոյն ծառայելու
պիտի նպատեն՝ սակայն վերջ յիշ-
ուած իրողութիւններէն բացայայտ
կը հասկցուի թէ Հասունեան պատ-
ուարժան աղգայինք ոչ միայն հե-
ռու են աղգային միութենէ, այլ մա-
նաւանդ դեռ ևս անդրաբնական
մահացու դաղափարներով կը սրնա-
նին և կրօնական անձատու մի իբր ու-
րոյն աղգութիւն կը նկատեն, որ
արդարեւ յաւակցութեան արժանի է:

Մարտիկայէն այս առաւօտ յանձ-
նարարութիւն մ'եկաւ Կիւղէ-Հաճ-
եանց Պանքային, որ 7000 ֆրանք ևս
վճարեն Սովորեց կեդրոնական յանձ-
նաժողովին:

Հետեւեալ սրտաճմիկի նամակը
գլխաւորապէս աղգայինց ուշադրութեան
կը ներկայեմք:

Կէյլի Գընճըլար 20 մարտ 1880
Տէր.

Գեռ առաջին անգամ ըլլալով զըրա-
կան սպարէզն կ'իջնեմ. լրագրոյց հաճ-
րաւը փորձով գիտնալով նախամեծար
քնարեցի Ձեր թերթին մեծիմաստ էջե-
րն ինձ սպարէզ ունենալ, ուստի Ձեզ
կուղարկեմ ներկայ յայտարարութիւնս,
որ եթէ ընդունելութիւն գտնէ աղիւր
Մասեացի մի տոբոտ, մեծապէս պիտի
քաջալերիմ, և պիտի շարունակեմ իմ
թղթակցութիւնս:


Խնդրելով Տէր, մեծապէս ուրախ պի-
տի լինելի, երբ արժանանայի զձեռն
առջին անգամիս ուրախութիւն աւետել
Ձեզ և Մասեացի ընթերցողաց, որք այ-
ժմ հայրենեաց արդի դառն ցաւոց ցա-
ւակցելով չեն դադարել նոցա համար
ի խոր խոցելէ՝ սակայն յառաջնուս զըր-
կուելով այս շնորհքն, ցաւօք սրտի ըս-
տիպեցեաց զրիչ տառու, զրեզ զիւզիս
ողբալի վիճակին վրայօք մի քանի տխուր
և անպատմելի եղելութիւնք, որք կը յե-
րունակին երեք ամիսէ ի վեր, յորմէ յե-
տէ ձմեռն վրայ հասաւ, և անշափ եր-
կարտուութեամբ ձեռն անհանգստ տե-

CHILDREN TRAINING

Ով որ իր մաղերուն թափիլը չուս
գնւ, «Այբերի վիկօր» կոչուած մաղի
անուշահոտ ջուրէն դորձած ելուէ ւ
ուրիշ ամեն տեսակ մաղի ջուրերը
կամ խեղերը՝ որ մաշ չի թափելու հա
մար կը ծախուին, բոլորն ալ անօգուտ
են ։ Իսկ վիկօրի օգուտը միխոնաւոր
փորձերով տեսնուածէ ւ, և Պօլսոյ ու
գաւաաւաց սէջ օր օրի դորձած ող
ներուն թիւը կաւեղնայ ։ Անեւը որ
իւրենց մաղերուն գեղեցկութիւնը
կորսնցնելու վրայ են, շուտով գոր
ծած են աս ջուրէն որ ինքորջոյ չզղջան
թափելու վրայ եղող մաղերը կը հաս
տատէ ու կապմբանդէ, թափածնե
րուն տեղը մաղ կը բււսցնէ երբոր
մաղերուն արմատը ֆլաւաւած չէ
ու ճերմկած մաղերը անպատճառ
իւ նախկին բնական գոյնին կը բերէ,
գորձած ելուն կերպը չի շերտն հետն
ւ ։ կը ծախուի Ա. Պօլիս Ղալաթիս
Միմաստեան և Ընկերաց Ամերիկայի
Մարդասէն ։

A detailed illustration of a vintage hand-operated water pump or sprayer. The device features a vertical cylindrical body with a handle on the right side, a pump mechanism at the top, and a hose or pipe extending from the side. The illustration is in a woodcut or engraved style, showing fine details of the mechanical components.

Ամերիկայի ջրհաններ
մեծ և փոքր, երկայն
թե հասաառուն խողջ
վակներով թե ջրօղջ
ներու և թե խորունկ
հորերու համար ա-
ժան գներով կրճախ-
ուի, Կ. Պոլիս Դալա-
թիայ Ենիոսեան և
բնիկերայ Ամերիկայի
մայրաքաղաք ։



0 2 U. 0.

Անուշահոտ օճառ, մերթը կը կա-
կողցոյնէ ու լեզի շուրտով ալ կը փըր-
փըրէ, տեսաւը խառն աղչիւ ու դէ-
նը շատ աժան է. կը ծախուի Կ-
Պօլիս Ղալաթիկայ Միասնական ու ընկե-
րաց Ամերիկայի մաղաղան :